Ուստի	ընդ Հօր	զՈրդին	օրհնեմք.
Ընդ Հօր	միշտ սուրբ	զՀոգին	գովեմք.
Զորդին	զՀոգին	և զՀայրն	յաւէտ.
Օրհնեմք	գովեմք	յաւէտ	պաշտեմք։

Այս մեր	հաւատ	ամբիծ	ընտրեալ.
Հաւատ	բոլոր	մասամբք	պաշտեալ.
Ամբիծ	մասամբք	կեանք մեզ	յայտնեալ.
Ընտրեալ	պաշտեալ	յայտնեալն	օրհնեալ։

Ի յաւիտեանս յաւիտենից ամէն։

Գրչագիրն, որից վերցնում ենք այդ երկու ոտանաւորներն, ունի և մի հետաքրքրական յիշատակարան, արտայայտող այն պանծալի ոգին, որ միշտ փայլել է ս. Էջմիածնի դպրոցից ելած միաբանների մէջ։ Հաւատարմութիւն առ Մայր Աթոռն և անձնուէր գործունէութիւն Հայաստանեայց ս. եկեղեցու բարեզարդութեան համար եղել է միշտ դոցա փայլուն յատկութիւնն, այնպէս որ ս. Էջմիածնի միաբանները մինչև անգամ կախաղան են բարձրացել յանուն իւրեանց այդ աստուածակոխ սրբարանին։

Մի տեղ ասում է Մինաս վարդապետը. «Եւ այսպէս պարապնդեալ զմեզ յամենուստ կողմանց ի մերկամարմին ելոյ՝ վառեսցուք զմեզ ըստ ամենայնի զինուք Հոգւոյն Սրբոյ՝ սաղաւարտ ի գլուխս, վահան ի յուս, սուսեր յաղդեր, աղեղն ի ձեռին և կօշիկս յոտս ըստ սրբազանին Պօղոսի քաջալերս տուեալ սոքօք ինքեամբ ինքեան կազմ եղիցուք պատրաստութեամբ աւետարանին տալ պատասխանի ամենայնի, որ խնդրիցէ ի մէնջ զբան հաւատոյ ըստ սրբազանին Պետրոսի, որովք և մղեսցուք զմեզ յառաջ այժմ և ի մերն ստադիոն հոգևոր բանական մենամարտութեանս առ ի վարժիլ և վարժել, ստանալ և տալ, ցօղիլ և ցօղել, արբենալ և արբուցանել, գտանել և օժտել, հասանիլ և հասուցանել. տեղեկանալ թագնութեան մեծի և իրազգացս առնել տարփացեալ ոդոց՝ զոր ինչ միանգամ ուսուսցէ մեզ Հոգին ճշմարտութեան. և միանգամայն իսկ ասացից ի հանդէս ի զնին մտեալ գործել ինչ և զկատարածն իրին տուողին ամենայն շնորհաց յանձն արասցուք, գուն գործեալ միայն, զի մի ի հետոց հոգեկրիցն խոտորս ինչ ընթասցուք . . . . .

Ահաւասիկ յիշատակարանը.

Փառք պատիւ պաշտօն գոհութիւն և երկրպագութիւն Անեղին և միշտ Գոյին, Անսկզբան և անվաղճան թագաւորութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ։ Որ մշտածաւալ իւրով բարերարութեամբն խնամէ ընդ հնազանդութեամբ իւրոյ ինքեան անզուսպ իշխանութեան զամենայն գոյս։

Որով և ամենիցն տայ ըստ իւրն կամաց՝ ըստ իւրաքանչիւր չափու շարժիլ ի գործնականն՝ տեսականին առաջնորդութեամբ. ևս առաւել զայնս՝ որք անկիրթքն են նորին ներհունապէս շնչմանն տեսութեան։ Որոյ առատաձիր շնորհօքն և անհուն ողորմութեամբն՝ և օգնականութեամբն Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ՝ ի լրումն եկեալ կատարեցաւ գրեցումն նորափայլ գրքոյս՝ որ կոչի Գիրք քարոզութեան և Հատոր առաջին։

Քարոզի՝ հեղինակի գրքոյս՝ տեառնս իմոյ տեառն Մինասայ աստուածաբան արքեպիսկոպոսին հոգևոր որդիս և սխալոտ ծառայս՝ մինչ էրն նա ի գործ ծայրագոյն նուիրարկութեան սրբոյ Աստուածեան Աթոռոյս Էջմիածնի ի մայրաքաղաքն Կ. Պոլիս՝ գոլով ի սպաս նորին՝ վասն անկիրթ գոլոյս իմ՝ քարոզութեան ժողովրդեանն՝ յիւրաքանչիւր ժամանակս թախանձէի զնա՝ առնել ըստ աստուածատուր շնորհացն իւրոց զքարոզս ի կրթութիւն և ի լուսաւորութիւն մտացս՝ և ի շահ և յօգուտ աստուածասէր ժողովրդոց։ Որ և ըստ հայրական գթոյն և բարեսէր կամացն իւրոց՝ բացասելով բազմագիմի զբաղանաց մեծի գործոյն՝ և անկարութեան ծերութեան իւրոյ՝ կատարէր զհայցուածս՝ և գրէր անխափան զցայգ և զցերեկ զքարոզս իւրաքանչիւր ժամանակի զպատշաճեալս զփառս միոյն Աստուծոյ։ Եւ մինչ ըստ գրելոցն կարգ՝ի սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի վիրապէն ելման տօնին առաջիկայ կիւրակէին զքարոզն սկսաւ գրել՝ որ էր կաթուղիկէ եկեղեցւոյ սրբոյ Աթոռոյս Էջմիածնի օծման և նաւակատեաց աւուր քարոզն ի բանն իմաստնոցս թէ «իմաստութիւն շինեաց իւր տուն՝ այլովքն հանդերձ՝ լայնացաւ՝ մեծացաւ՝ և բազմացաւ յոյժ գրուածն այն ըստ յաջողելոյն Աստուծոյ. և բաժանեցաւ յերիս գլուխս և յոմանս հատուածս՝ և ի բազում քարոզս և ի ճառս. և եղև մի մեծ գիրք աստուածաբանութեան՝ և կոչեցաւ հատոր երկրորդ՝ Ուստի՝ և մնացեալ այլ ամենայն քարոզքն՝ և որք յառաջմէ եղեալ ասութիւնքն ժողովեցան ի մի տուփ՝ և եղև գիրքս այս՝ որ կոչեցաւ հատոր առաջին։ Եւ այս ամենայն կամեցողութեամբ և հրամանաւ տեառն իմոյ և հօր ըստ հոգւոյ հեղինակի գրուածոցս։ Որք թէ այս առաջին հատորս և թէ այն երկրորդ հատորն ի ներկայութեան տեառնս գրեցան ի նախկին գրուածոցն՝ և առաջի նորին վեհանձնութեան ընթերցեալ եղեն և սրբագրեցան. և եղեն սոյնքս հեղինակ գրուածոցն։

Որոց երկոցունց հատորիցն գրեցումն ևս ի միասին լրումն եկեալ կատարեցաւ. ի հայրապետութեան Սրբոյ և մեծի Աստուածեան Աթոռոյս Էջմիածնի Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսին ամենայն Հայոց։ Ի թուոջ Փրկչին մերոյ 1799. և ի թուոջն մերում ՌՄԽԸ. ընդ հովանեաւ Սրբոյ Շնորհածաւալ Աթոռոյս Էջմիածնի՝ ի Մարտի մէկն։

Արդ՝ ուրեմն որք հանդիպեցիք թէ սոյն առաջին հատորիս՝ և թէ սոյն

երկրորդ հատորին կարդալով կամ օրինակելով, և կամ միայն տեսանելով, նախապէս տուք փառս Աստուծոյ յաջողողին և տնօրինողին ամենայնի։

Եւ ապա յիշեսջիք ջերմեռանդ ըղձիւ ի մաքուր և սուրբ յաղօթս ձեր զՀոգևոր Հայրն իմ, և մանաւանդ զԳլխովին դաստիարակն իմ և զուսուցիչ զտէր Մինաս արժանապատիւ ԱրՀի-եպիսկոպոսն և զաստուածաբան վարդապետն զՀեղինակն հատորիցս։ Որոյ յիշատակն եղիցի ընդ տէրունիսն ի բարին, հանդերձ ծնողաքն իւրովք և համայն զարմիւք, հոգևորօք և մարմնաւորօք, ամէն։

Նաև յիշեսջիք ի Քրիստոս զՀոգևոր որդիակն նոյնոյ իմոյ վարդապետիս Մինասայ, զՀարազատ եղբայրն իմ շնորհափայլ զտիրացու Իգնատիոսն, ընդ այլ աշակերտաց և հոգևոր որդւոց նոյնոյ տեառնս իմոյ տեառն Մինասայ մեծի բազմաշնաստ աստուածաբան ԱրՀի եպիսկոպոսին։

Ընդ որս յիշեսջիք ի ս. աղօթս ձեր զնորին, այսինքն զվարդապետինս Մեծին Մինասայ զաշակերտս, և մանաւանդ զՀոգևոր որդիս, զսխալոտ և զյետին միաբանս Սրբոյ և մեծի Աստուածակերտ Լուսակազմ Աթոռոյս Էջմիածնի, և բթամիտ պաշտօնեայս ի գործ բանի սպասաւորութեան, զԳէորգ եպիսկոպոսս, որ լեալ ցանկացող աստուածային բանիցս, գրեցի ըստ իմում կարի զերկոսին իսկ զՀատորսն, ի վայելս իմումս նուաստութեան և ի յիշատակ տեառնս իմոյ գորովագութ ծնող Մինաս բազմարդիւն և աստուածաբան եպիսկոպոսին։ Որում Տէր տացէ զկեանս երկարս և խաղաղս ի զուարճութիւն և ի փառս նուաստ ծառայիցս։ Եւ գթալով յիշեսցէ և զամենեսին զվերոյ գրեալսդ։ Եւ զձեզ զյիշողսդ միով Հայր մերիւ։ Եւ զմեզ և զծնողսն մեր և զամենայն վաստակաւորս, զՀոգևորս և զմարմնաւորս. ի միւսանգամ գալստեան իւրում լսել տալով զերանաւէտ զձայնն որ ասէ, «եկայք օրՀնեալք Հօր իմոյ»։ և այլն։

Վերջապէս և այս է տեառնս իմոյ Հեղինակի հատորիցս պատուէր, և իմ աղաչանք առ ձեզ, զի եթէ կամիցիք օրինակել զՀատորսս զայսոսիկ, զգուշութեամբ և հարազատութեամբ օրինակեսջիք, թարց աւելացուցման բանից և բառից և առանց պակասեցուցման։ Ընդ որս գրեսջիք և զայս յիշատակարանս առանց զանցառման ի յիշատակ մեղսամերկ անձին իմոյ ըստ ներքնոյն և արտաքնումն սևազգեցի։ Զի վարձատրեսջիք ի Քրիստոսէ Աստուծոյ և Փրկչէն մերմէ. որում ընդ Հօր և Հոգւոյն Սրբոյ փառք և երկրպագութիւն յաւիտեանս յաւիտենից ամէն *։

Ա. Տ. Մ.

---

* Այս գրչագիրն, ստացել եմ շնորհակալութեամբ մեծ. Պ. Լեւոն Ցարութիւնեանից։ Հետեւեալ անգամ կտանք ուրիշ ոտանաւորներ եւս։